


Անատոլի Գրիգորյանի 1990-ականների ստեղծագործությունները

Ասլանյան Միսակ Լ.

Արվեստի պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0000-9397-6325>
misakaslanyan@gmail.com

ՀՏԳ 74; EDN: MMTNDD

DOI: 10.58587/18292437-2025.1-114

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Անատոլի Գրիգորյան, գունագեղ, տոնական, հնչեղ, հեքիաթային, իրական, երևակայական, «չորրորդ պատ», երազանքներ, պայմանականություն

Полотна Анатолия Григоряна 1990-х годов

Асланын Мисак Լ.

Аспирант кафедры истории и теории искусства

Государственная академия изобразительных искусств Армении (Ереван, РА)

Аннотация. Анатолий Григорян – выдающийся армянский художник XX-XXI веков, оказавший значительное влияние на изобразительное искусство страны. В 1990-е годы его творчество вступает в новый этап, характеризующийся завершением поисков, свойственных его раннему периоду. Этот период становится временем осознания и утверждения собственного художественного языка и философских взглядов. Если ранее Григорян одинаково уделял внимание линии и цвету, то теперь его акцент смещается на композицию и цвет. Работы художника становятся более глубоко структурированными, насыщенными символизмом и философским содержанием. Основной темой становится размышление о жизни, ее ценностях и смысле. Его произведения не просто изображают реальность, а становятся философскими медитациями о бытии. Цвет в его картинах превращается из декоративного элемента в мощный выразительный инструмент, который помогает передать внутренний мир и чувства художника. Работы 1990-х годов наполнены многослойностью, где зритель может искать новые интерпретации и смыслы. В этом контексте Григорян создает произведения, которые не только визуально впечатляют, но и становятся философскими размышлениями о жизни. Таким образом, 1990-е годы для Григоряна — период утверждения зрелого стиля и углубленного осмысления жизни через искусство.

Ключевые слова и словосочетания: Анатолий Григорян, красочный, звучный, праздничный, сказочный, реальный, воображаемый, «четвертая стена», фантазия, условность

Paintings of Anatoly Grigoryan in the 1990's

Aslanyan Misak L.

Postgraduate student at the Department of Art History and Theory

State Academy of Fine Arts of Armenia (Yerevan, RA)

Abstract. Anatoly Grigoryan is a prominent Armenian artist of the 20th-21st centuries, who made a significant impact on the country's visual arts. In the 1990s, his work entered a new phase, marked by the completion of the artistic search characteristic of his earlier period. This period became a time of recognizing and affirming his own artistic language and philosophical views.

While earlier Grigoryan paid equal attention to line and color, by the 1990s, his focus shifted to composition and color. His works became more deeply structured, filled with symbolism and philosophical content. The main theme became reflections on life, its values, and meaning. His works no longer just depict reality but become philosophical meditations on existence.

Color in his paintings transformed from a decorative element into a powerful expressive tool, helping convey the artist's inner world and emotions. The works of the 1990s are multilayered, where the viewer can find new interpretations and meanings. In this context, Grigoryan created pieces that not only visually impress but also serve as philosophical reflections on life.

Thus, the 1990s for Grigoryan was a period of establishing a mature style and a deeper understanding of life through art.

Keywords & phrases: Anatoly Grigoryan, colorful, fabulous, real, imaginary, «the fourth wall», fantasy, convention, sonorous, festive, fairy-tale-like

Անատոլի Գրիգորյանի ստեղծագործու- արվեստի ամենանշանակալից դրվագներից մեկն
թյունը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ կերպ- է: Ցավոք, մինչ այժմ նկարչի արվեստի մասին


չկա խորը և ծավալուն ուսումնասիրություն: Բացառություն են կազմում Նկարիչների միությունում, ՀԱՊ-ում կազմակերպված առանձին ցուցահանդեսների կատալոգների [2, էջ 568; 3, էջ 197] նախարանում հանդիպող մի քանի պարբերություն և մեկ-երկու ընդհանուր ճանաչողական հոդվածներ: Հատկանշական է այն, որ Գրիգորյանը իր ուժերը փորձել է գրեթե բոլոր տեխնիկաներում: Նրա ստեղծագործական ժառանգության մաս են կազմում յուղաներկով, գուաշով, պաստելով, ջրաներկ և գծանկար աշխատանքները: Երիտասարդ տարիներին նա իր ուշադրությունը մասնավորապես սևեռել է գրաֆիակայի և գծանկարի վրա, որոնցով արված աշխատանքները համեստ, բայց ինքնուրույն տեղ ունեն նրա ստեղծագործության մեջ: Այստեղ նկարիչը արտացոլում է իր մտքերն ու զգացմունքները, արտահայտում իրական աշխարհի իր սեփական ընկալումը: Այդ նկարները բացահայտում են նկարչի լիրիկական էությունը, ձևերի ազատ պատկերման մեջ զգացվում է նրա զգայական և քնարական աշխարհընկալումը: Հիմնականում յուղաներկով և ջրաներկով արված այս փոքրաչափ աշխատանքներում Գրիգորյանը իր առջև չի դնում գեղանկարչական մեծ խնդիրներ: Այս պարզ կոմպոզիցիաներում նկարիչը սակավաթիվ գծերի միջոցով կերպարներին բնորոշ էական գծեր է հաղորդում, իսկ մի ֆիգուր պատկերելով, կարողանում է մի ամբողջական հորինվածք կառուցել:

Այս շրջանում նա հազվադեպ է իր նկարներին անվանումներ տալիս, բայց դրանք միավորվում են յուրօրինակ շարքերով: Մարդը և բնությունը պատկերված են միասնական համակարգում, որոնք ասես զարթոնք և կյանքի վերակենդանացում են խորհրդանշում («Սևան. Սպիտակ քարեր» (1987, կտ./յուղ. 50x55) (նկ. 1), «Վաղ գարուն» (1986, կտ./յուղ. 70x60)):

Այս աշխատանքներում նկատվում են պայմանական որոշ տարրեր. նկարիչն արտահայտում է բնության և մարդու ներդաշնակությունը, բացահայտում մարդու հուզումներն ու ներաշխարհը: Տեսողական կերպարը ձգտում է դառնալ աներևույթ երևույթների խորհրդանիշ, շարունակաբար կրկնվում է աշխատանքից աշխատանք, ոճավորվում, սակայն մնում ճանաչելի:

Նկարիչը չի կարող նկարել այն, ինչի նկատմամբ անտարբեր է, արվեստը ստեղծվում է դեպի կյանքն ունեցած հետաքրքրությունից և սիրուց: Գրիգորյանն, իր ամենավաղ աշխատանքներում իսկ, անդրադառնալով ամենատվորական և առօրեական թեմաներին, անսովոր հմայք է հաղորդում նրանց: Այդ աշխատանքներից են «Բնանկար. Գորիս» (1986 թ.) և «Սևանա կղզին» (1988 թ.), ուր նկարիչը գեղար-

վեստականորեն մարմնավորում է զարնան շունչը:



Նկ. 1. Անատոլի Գրիգորյան, «Սևան. Սպիտակ քարեր» (1987, կտ./յուղ. 50x55)

«Սևան. Սպիտակ քարեր» աշխատանքը ամբողջությամբ կառուցված է շեշտված վրձնահարվածների համադրումով, որոնցից յուրաքանչյուրը ուղիղ կամ թեք գիծ է ձևավորում: Այստեղ՝ կապույտի, կանաչի նուրբ փոխազդեցությամբ կազմված գունապնակը բնության հմայքն ու մեղմ տրամադրությունն են հաղորդում:

Բազմիցս միևնույն մոտիվը ներկայացնող այդ նկարներն ու էսքիզները այնքան անմիջականություն և թարմ շունչ են իրենց մեջ պարունակում, որ երբեք չեն հնչում որպես մեկ անգամ արդեն պատկերվածի կրկնություն: Նկարիչը իր հորինվածքներում պատկերել է Սևանի լճի պարզ ու խաղաղ ամայի ափերը, որոնք, զարմանալի է, բայց նկարված են ընդամենը մի քանի գույնի նրբերանգներով: Խիստ ռիթմիկ կառուցվածքով ոգեշունչ բնապատկերները, չնայած այն բանին, որ անմարդաբնակ են, մարդու և բնության միասնական ներդաշնակության զգացողություն են ստեղծում, արդնացնելով դիտողի մոտ էմոցիոնալ հագեցվածությամբ հիշողություններ:

1990-ական թվականներից նկարիչ Գրիգորյանի թեմատիկ նախասիրությունները նկատելիորեն փոփոխվում են՝ կյանքի ճշգրիտ և ճշմարիտ արտացոլումը տեղ է զիջում նոր ճշմարիտ մեկնաբանության. եթե նախորդ շրջանի կտավները արտահայտում էին բոլորի կողմից տեսանելի իրականությունը, ապա այժմ նկարիչն առաջարկում է իր սեփական իրականությունը՝ դիտված և վերապրած, երազած և զգացված, հորինված և իրական: Մրանք նկարչի պոետիկ էության նոր կողմերն են բացահայտում, որոնցում պատկերված կերպարները գերում են

իրենց գեղեցկությամբ և հոգեկան հանգստի ու հուզումների անխռով մաքրությամբ:


Նկարիչն աշխատում է մի քանի գույնով, հաճախ առանց աստիճանական անցումների՝ մուգի և բացի, սևի և սպիտակի կտրուկ հակադրումների միջոցով, նա ստեղծում է գրաֆիկական մտածողությամբ բացառապես գեղանկարչական պատկերներ, որոնցում սևը, մուգն ու կոնտրաստը անսովոր բազմաբովանդակ են հնչում: Գույնի նկատմամբ այս վերաբերմունքը գալիս է դեռևս Վերածնունդից՝ վենետիկյան դպրոցից, երբ գույնը դառնում է ոչ թե լոկ նկարչական միջոց, այլ գեղանկարչական հնարք՝ այն ստեղծում է ֆակտուրա, գունահարաբերություն, օգնում բացահայտել կերպարներ: Ձևերի միտումնավոր ու հստակ անավարտությամբ, հաճախ մեկ գծով, նկարչին հաջողվում է հաղորդել թե՛ կերպարային առանձնահատկությունները, թե՛ ընդհանուր հորինվածքի տրամադրությունը: Կտավի հարթության տարբեր հատվածներում երբեմն ազատ թողնելով սպիտակ թղթի մակերեսը՝ նկարիչն էլ ավելի է շեշտում առկա կերպարային հակադրությունները և ավելի հնչեղ ու լարված-էքսպրեսիվ դարձնում պատկերը:

Ընդհանուր գունազգացողության մեջ նրա աշխատանքներում առկա են հայկական միջնադարյան խորքային ակունքներն ու մտածողությունը. նկարիչն օգտագործում է հիմնական մանրանկարչական գույները՝ կարմիրը, կապույտը, կանաթը և ոսկեգույն-դեղինը:

Անատոլի Գրիգորյանի աշխատանքներում դժվար է տեսնել որևէ նկարչի անմիջական ազդեցությունը, սակայն մտածողության և կերպարային լուծումների առումով որոշ աղերսներ կարելի է նկատել նրա սերնդակից նկարիչներ Էդիկ Վարդանյանի, Ռուբեն Մանուկյանի, Մարտին Պետրոսյանի հետ: Նշված նկարիչների արվեստում էլ գերիշխում է թատերական, խաղարկային մոտեցումը, երբ հերոսները դերասաններ են կամ խամաճիկներ: Վարդանյանի մոտ միջավայրը, կերպարները հորինված են, պատկերները պայմանական են և ողջ ասելիքն ամրագրվում է հովվերգական տրամաբանության ու տրամադրության մեջ («Հարսնատես» (2018, կտ./յուղ. 50x80)) (նկ. 2): Մարտին Պետրոսյանի համար հեքիաթային աշխարհը դառնում է միստիկ, դրամատիկ, սառը գույներով, հաճախ նույն գույնի մեջ մտածված պատումներ («Ընկերություն» (1978, կտ./յուղ. 150 x130)) (նկ. 3): Ռուբեն Մանուկյանի հերոսներն էլ, ասես, թատերական ներկայացման կերպարներ լինեն, որոնք հայտնվել են մեր իրականության մեջ («Հայելի» (1988, կտ./յուղ. 24 x30)) (նկ. 4):



Նկ. 2. Էդուարդ Վարդանյան, «Հարսնատես» (2018, կտ./յուղ. 50x80)



Նկ 3. Մարտին Պետրոսյան, «Ընկերություն» (1978, կտ./յուղ. 150 x130)



Նկ. 4. Ռուբեն Մանուկյան, «Հայելի» (1988, կտ./յուղ. 24 x30)

Անատոլի Գրիգորյանի կտավներն էլ են հիշեցնում թատերական բեմադրություններ, սակայն մի տարբերությամբ՝ թատերական «չորրորդ պատը» այս դեպքում դառնում ենք ոչ թե մենք՝ դիտողներս, այլ ինքը՝ կտավը: Ասես մեր կյանքն է դռնում ներկայացում, իսկ նկարում պատկերվածը՝ իրականություն:

Հեղինակը ձգտում է պայմանականության, ինչն արտահայտվում է ամեն ինչում՝ միջավայր, հերոսներ: Նկարիչը միտումնավոր ընդհանրացնում է, պահի տակ անգամ հեռացնում երկրորդական, երրորդական տարրերը, ուշադրությունը սևեռելով հիմնական ասեյիքի և տրամադրության վրա: Մինևույն ժամանակ, հարկ եղած դեպքերում, միտումնավոր մանրամասնվում են լրացուցիչ, գաղափարը բացահայտող

մանրուքներ՝ հազուստի դրվագում, տարատեսակ ատրիբուտների մշակում:

«Մսավաճառը» (1995, կտ./յուղ., (55x38)) (նկ. 5) կտավում նկարիչը ստեղծում է հավաքական մի կերպար: Թեև ակնհայտ է պորտրետային մշակվածությունը և հասկանալի է, որ աշխատանքը նկարվել է կոնկրետ բնորդից, սակայն պայմանական մուգ ֆոնը, մսավաճառի հետ ասոցիացվող տարրերը՝ արյունոտ գոգնոց, ուղեկող շուն, ստեղծում են ընդհանրացնող տպավորություն՝ հերոսը դառնում է «հատուկ անուն» և հավաքական կերպար: Նման մոտեցում հաճախ հանդիպում է պրիմիտիվիստ նկարիչների մոտ, երբ կոնկրետ դիմանկարը դառնում է խոսուն մի պատում (օր. Նիկո Փիրոսմանիի «Ձկնորսը», 1908, մոմլաթ/յուղ.), (նկ. 6):



Նկ. 5. Անատոլի Գրիգորյան, «Մսավաճառը» (1995, կտ./յուղ., 55x38)




Նկ. 6. Նիկո Փիրոսմանիի, «Ձկնորսը» (1908, մոմլաթ/յուղ., 113 x 93)

«Ծաղրածուներ» (1995, կտ./յուղ., (60x50)) (նկ. 7) կտավում խաղարկային գործողությունը կատարվում է մուգ կապույտ ֆոնին: Նրանք թեև մանրամասն մշակված են մեջ, միևնույնն է կոնկրետ չեն, այլ հավաքական կերպարներ են, ընդհանրացված մի գաղափարի մեջ: Թվացյալ արտաքին պարզության մեջ, հեղինակը հնարավորություն է տալիս դիտողին հաջորդաբար խորանալու, ներթափանցելու կտավի հերոսների ապրումների մեջ: Եվ յուրաքանչյուր այդ խորացման մեջ, հանկարծ սկսում են բացահայտել այն հույզերն ու զգացողություններն, որոնք բնորոշ են քեզ՝ «չորրորդ պատն» այս պետքում թեքվում է և մենք ենք դառնում ծաղրածուներ:


Վառ տաք գույներով ստեղծված գրիգորյանական արտաքուստ ամգամ ամենադրական և զվարճալի թեմայով վրձնված կտավները, խորը դիտման ժամանակ ձեռք են բերում դրամատիկ հնչյուններ՝ «Խնջույք» (1996, կտ./յուղ., (55x38)) (նկ. 8) կտավը թեև տոնական է, գունագեղ և

հնչուն, սակայն ստիպում է մտածել և խորհել արժեքների մասին:

Այս շրջանի ինքնատիպ աշխատանքներից է «Սրճարան» (1995, կտ./յուղ., (60x80)) (նկ. 9) կտավը: Նկարչի ներկապանակին բնորոշ գույներով լուծված այս աշխատանքը փոքր-ինչ տարբերվում է մյուսներից. նախ, ընդհանրացված ֆորմաների վրայից, սահուն գծերով ուրվագծված են կերպարների դիմանկարային գծերը: Ասես, նկարիչը համադրել է գեղանկարչությունն ու գրաֆիկան: Երկրորդը՝ աշխատանքը բազմաֆիգուր է, ինչը բնորոշ էր նկարչի վաղ շրջանի գործերին՝ «Չարթոնք», «Տոն»: Եվ, երրորդը՝ հեղանկարային խորացված երկրորդ պլանը պայմանական նեյտրալ ֆոն չէ, այլ կրճատումներով պատկերված քաղաքային համայնապատկեր: Այդ համայնապատկերում ակնհայտ նկատվում են իմպրեսիոնիստական տարրեր՝ գունային և տոնային մշակումների, անցումների մեջ և նրբերանգների թեթևություն:



Նկ. 7. Անատոլի Գրիգորյան, «Մադրածուներ» (1995, կտ./յուղ., 60x50)



Նկ. 8. Անատոլի Գրիգորյան, «Լսնջույք» (1996, կտ./յուղ., 55x38)



Նկ. 9. Անատոլի Գրիգորյան, «Սրճարան» (1995, կտ./յուղ., 60x80)

Դրա հետ մեկտեղ, ողջ աշխատանքի հորինվածքը, պլանային դասավորվածությունը հիշեցնում է իմպրեսիոնիստ նկարիչների միևնույն թեմայով արված աշխատանքները, մասնավորապես Էդուդ Մանեի «Բարը Ֆոլի Բերժեում» կտավը:

Այս շրջանի աշխատանքները նկարչի անհատականության և ստեղծագործական փնտրումների միասնության արդյունք են: Վարպետորեն տիրապետելով գծի կուլտուրային, նկարիչը կատարում է ազատ և սահուն մշակումներ ու շեշտեր: Այս աշխատանքներում գիծը կանխորոշում է զանգվածների հավասարակշռությունը, իսկ գույնը կերտում է հուզականություն ու տրամադրություն: Հորինվածքներին բնորոշ է վերլուծությունն ու դինամիկ ռիթմը, անսովոր

կենդանությունն ու պարզությունը, գծի համարձակությունն ու ուժը:

Այսպիսով, 1990-ականներին ստեղծված Անատոլի Գրիգորյանի աշխատանքները խիստ բազմազան են թե՛ թեմատիկ առումով, և թե՛ գեղարվեստական արտահայտչականությամբ: Դրանք և՛ դասական ոճով նկարված բնանկարներ են, թե՛ հավաքաբան դիմանկարներ և թե՛ թեմատիկ պատկերներ: Մակայն հենց այս շրջանում է, որ ձևավորվում և ավարտուն տեսք է ստանում Գրիգորյան-նկարչի ուրույն գեղարվեստական ոճը՝ կառուցողական գույնը, ներշնչանքը, հեքիաթային-թատերական ներկայացում-կյանքը: Նկարչին հետաքրքրով թեմաները մնում են նույնը՝ մարդ, բնություն, կերպար, սակայն փոխվում է բովանդակությունը, հույզերը: Զնարականությանը գալիս է փոխարինելու փիլիսոփայությունը...

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գոմցյան Ն.**, Անատոլի Գրիգորյան, կատալոգ: – Երևան, «Տիգրան Մեծ», 2008:
2. **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.**, Հայ արվեստի պատմություն: – Եր., «Չանգակ», 2009. – 576 էջ:
3. **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում: – Եր., «Ոսկան Երևանցի», 2009. – 292 էջ:

Տժնա/Հանձնվել է՝ 16.12.2024
Րեցենզրվանա/Գրախոսվել է՝ 23.12.2024
Սրնյա/Ընդունվել է՝ 30.12.2024